ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 18 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Հովհաննես Ռուշանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Հ. Ռուշանյանը 03.05.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի, 118.3.-րդ հոդվածի 1-ին ենթակետի, 118.6.-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 եւ 234-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի եւ վարչ. դատ. օր.-ի նշված դրույթների սահմանադրականության հանգամանքը մինչ այդ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2008թ. մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754, 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765, 2010թ. ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշումներով:

Այսպիսով, դիմումում առաջադրված այդ հարցերի վերաբերյալ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշումները, իսկ նմանօրինակ պայմաններում բացակայում են գործը քննության ընդունելու օրենքով սահմանված հիմքերը:

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր հստակ եւ սպառիչ իրավական դիրքորոշումն արտահայտել է դեռեւս 2006թ. նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-668 որոշման 5-րդ կետում: Բացի դրանից, հարկ է արձանագրել, որ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմումում չեն բերված անհրաժեշտ եւ բավարար իրավական փաստարկներ՝ հիմնավորելու համար վերը նշված օրենքի 1-ին հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու պարագան: Ընդհակառակը, դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է տարբեր պետական մարմինների կողմից այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Ի դեպ, գործի նյութերով՝ մի շարք դատական ակտերով, հիմնավորված է, որ դիմողի պահանջը՝ իրեն պատերազմի հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ, չի վիճարկվել, ավելին՝ համարվել է արդեն կարգավորված ՀՀ գործող օրենսդրությամբ եւ ԱՊՀ-ի շրջանակներում կնքված՝ 1994թ. ապրիլի 15-ի միջպետական համաձայնագրով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Հովհաննես Ռուշանյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 մայիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-17